UN Partnership on the Rights of Persons with Disabilities

ILO | OHCHR | UNDESA | UNDP | UNESCO | UNFPA | UNICEF | UN WOMEN | WHO

Միջոցառման հաշվետվություն

Անվանումը	**«Անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման գործընթացում ներգրավված գերատեսչությունների միջև ֆունկցիոնալության գնահատման և ծառայությունների տրամադրման համակարգման նպատակով տեղեկատվության փոխանակում» աշխատանքային քննարկում**
Նպատակներ	Անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման համատեքստում երեխաների և չափահասների ֆունկցիոնալության գնահատման և տրամադրվող ծառայությունների համակարգման նպատակով ՀՀ ԱՍՀՆ, ՀՀ ԱՆ և ՀՀ ԿԳՄՍՆ միջև քննարկել և համաձայնություն ձեռք բերել. • տեղեկատվության փոխանակման ընթացակարգերի, • փոխանակման ենթակա տեղեկատվության բովանդակության, ձևաչափի, ժամկետների և անհրաժեշտ ռեսուրսների վերաբերյալ: Ինչպես նաև հստակեցնել տեղեկատվության փոխանակման համար պատասխանատուներին:
Ամսաթիվ	Նոյեմբեր 25-26, 2019 թվական
Վայրը	«Անի Գրանտ Հոթել» հյուրանոց
Վարողները	Գեմաֆին Գասպարյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ Աննա Հակոբյան, ՀՀ ԱՍՀՆ, Հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ:
Ծրագիր	ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստանի ֆինանսավորմամբ իրականացվող «Հաշմանդամության սահմանման գործիքների ու մեթոդաբանության ներդաշնակեցում և հաշմանդամություն ունեցող երեխաների մասին միջոլորտային տեղեկատվության փոխանակման և տվյալների կառավարման համակարգի ձևավորում» ծրագիր

Enabling Social Impact Consulting Group
Partnership for informed decision-making and positive social impact

UNDP Empowered lives. Resilient nations.

unicef for every child

CRC30 YEARS CONVENTION ON THE RIGHTS OF THE CHILD

Տրամադրված նյութեր	Մասնակիցներին ներկայացվել է անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման աշխատանքների ընթացքը, ESI խորհրդատվական ընկերության կողմից իրականացված երկու ուսումնասիրությունների արդյունքները՝ «Հայաստանում հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ տվյալների առկայությունը և տվյալների փոխանակման բացերը» և «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքների արձանագրման գործող և առաջարկվող մեթոդների համեմատությունը»: ԿԱՊԿ գնահատման նոր համակարգը, edisability համակարգը և e-health համակարգը: Հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումների և անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման ծրագիրը: Միջգերատեսչական տեղեկատվության փոխանակման քարտեզը՝ փոխանակվման համար նախատեսվող տեղեկատվության ցանկով:
Մասնակիցները	Հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումների և անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման աշխատանքներն ապահովելու նպատակով ստեղծված միջգերատեսչական փորձագիտական աշխատանքային խմբի անդամներ, համապատասխան գերատեսչությունների ստորաբաժանումների և ոլորտում ներգրավված հասարակական կազմարեպությունների ներկայացուցիչներ:
Արդյունքները	Անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման գործընթացում ներգրավված գերատեսչությունների և նրանց ստորաբաժանումների միջև ծավալվեց արդյունավետ քննարկում և նախագծվեցին անձի/երեխայի ֆունկցիոնալության բազմակողմանի գնահատման և ծառայությունների տրամադրման համար. – անհրաժեշտ տեղեկատվության բովանդակությունը, – պատասխանատուները, – տեղեկատվության փոխանակման ձևաչափը, գործիքները և ժամկետները: Համաձայնություն ձեռք բերվեց մանրամասնել փոխանակվող տեղեկատվության ցանկերը (յուրաքանչյուր գերատեսչություն կներկայացնի իրեն անհրաժեշտ տվյալների ցանկը) և ներկայացնել առաջարկություններ համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, որոնցով պետք է կանոնակարգվեն և սահմանվեն տեղեկատվության փոխանակման գործընթացները և նշանակվեն պատասխանատուները:

Արձագանքը	Կլոր սեղան քննարկում: Առաջին օրը՝ Անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման ներկայացում և աշխատանքային քննարկում սոցիալական պաշտպանության և կրթության ոլորտի մասնագետների միջև, երկրորդ օրը՝ հիմնականում քննարկում սոցիալական պաշտպանության և առողջապահության ոլորտի մասնագետների միջև, որին մասնակցում էին նաև կրթության ոլորտի մասնագետները:
Քաղած դասերը	Կլոր-սեղան քննարկումը շատ արդյունավետ էր և անհրաժեշտ է այդ թիմով շարունակել քննարկումները՝ վերջնական ակնկալվող արդյունքին հասնելու համար:
Հաջորդ քայլերը	1. Ըստ յուրաքանչյուր գերատեսչության կողմից ներկայացված տվյալների մանրամասն ցանկի, լրամշակել և ամփոփել գերատեսչությունների միջև տվալների փոխանակման փաստաթուղթը/քարտեզը և կազմակերպել աշխատանքային խմբի քննարկում՝ փաստաթուղթը վերջնականացնելու համար 2. Ճշտել տվյալների հասանելիության ժամկետները և միջանկյալ լուծումները 3. Մշակել տվյալների փոխանակման ուղղությամբ իրականացվող միջոցառումների ցանկ և նշանակել պատասխանատուներ 4. Ներկայացնել առաջարկություններ կրթության և սոցալական ոլորտների տեղեկատվական բազաներում օգտագործվող տերմինների համաձայնեցման/ճշտման վերաբերյալ 5. Կազմակերպել հանդիպում-քննարկումներ Առողջապահության ազգային ինստիտուտում ձևավորված ՀՄԴ-ՖՄԴ աշխատանքային խմբի հետ 6. Աշխատանքային քննարկման արդյունքները ուղարկել համապատասխան գերատեսչություններին՝ վերջնական դիրքորոշում ներկայացնելու համար:

Աշխատաժողովի ամփոփ հաշվետվություն

Բացման խոսքով հանդես եկան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար տկն Բաթոյանը, Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Տանյա Ռադոչայը և Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի տեղակալ Միհաելա Ստոյկոսկան: Նրանք կարևորեցին ԱՀԿ ՖՄԴ հիման վրա ներդրվող անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման գործընթացը և ողջունեցին կլոր-սեղան քննարկման նախաձեռնությունը՝ «Նոր որակ է ձեռք բերվում, երբ մարդիկ հանդիպում և կիսում են իրենց գաղափարները: Գործընկերությունը հաջողության գրավականն է»:

ՀՀ ԱՍՀՆ ներկայացրեց Անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման առաջընթացը, հրատապ հարցերը և հետագա քայլերը: Այնուհետև ներկայացվեցին Հայաստանում հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ տվյալների առկայությունը և տվյալների փոխանակման բացերը, Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքների արձանագրման գործող և առաջարկվող մեթոդների համեմատությունը:

Երկօրյա աշխատանքային քննարկումների ընթացքում ՀՀ ԱՍՀՆ, ԿԳՄՍՆ և ԱՆ ներկայացուցիչները ներկայացրեցին edisability և ԿԱՊԿ գնահատման տեղեկատվական համակարգերի և e-health տեղեկատվական համակարգի հիմնական գործառույթները և հետագա զարգացումները: Քննարկվեցին տվյալների փոխանակման հնարավորու-թյունները, լուծում պահանջող խնդիրները, իրավական դաշտում անհարժեշտ փոփոխությունները և համագործակցության շրջանակները:

Հանդիպման մասնակիցները նշեցին, որ ԷԿԵՆԳ-ը շատ հեշտացրել է միջգերատեսչական տեղեկատվության փոխանակման հարցը:

ՀՀ ԱՍՀՆ և ՀՀ ԿԳՄՍՆ միջև քննարկումների արդյունում արձանագրվեցին.

Լուծում պահանջող խնդիրներ.

- ✓ Հստակեցնել և համապատասխանեցնել կիրառվող հասկացություններն ու տերմինները, որպեսզի բոլոր համակարգերում օգտագործվի նույն տերմինաբանությունը:
- ✓ Իրականացնել գնահատման գործիքների և մեթոդների վալիդացիա:
- ✓ Իրականացնել ԿԱՊԿ գնահատման գործիքների վերանայում, ֆունկցիոնալության նկարագրի ձևի հաստատում:
- ✓ ՄՀԱԿ-ը ունի e կոդերի գնահատման հստակեցման աջակցության կարիք:
- ✓ Անհրաժեշտ է երեխայի գործունեության և մասնակցության d-կոդերը գնահատող գործիքների վերանայում և վալիդացիա:
- ✓ Երեխայի բժշկական փաստաթղթերը կամ աշխտորոշումը, հաշմանդամության մասին տեղեկատվությունը հասանելի լինի կրթական համակարգին, սակայն պահպանվի էթիկայի և անձնական տվյալների գաղտնիությունը:

Իրավական ակտեր.

- ✓ Կատարել փոփոխություններ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում՝ համապատասխանեցնելով կրթական համակարգում երեխայի ԿԱՊԿ կարիքի գնահատման արդյունքների արձանագրման հետ, ֆունկցիայի սահմանափակումների փոխարեն ներդնել ֆունկցիոնալության սահմանափակում:

- ✓ Հստակեցնել ֆինանսավորման բարձրացված չափաքանակը, ըստ ծառայությունների և կարիքի, անհրաժեշտության դեպքում մշակել նոր կարգ:
- ✓ Հստակեցնել իրավական ակտերում գնահատված կոդերի վաղեմության հարցը:
- ✓ Դիտարկել միջգերատեսչական հարթակում որոշումների ընդունումը ոչ միշտ հիերախիայով կազմակերպելու, այլ նաև հորիզանական տարբերակով իրականացնելու հնարավորությունները:

Տեղեկատվության փոխանակում.

- ✓ Կրթական համակարգին անհրաժեշտ է.
  - տեղեկատվություն երեխայի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանի, սահմանման ժամկետի, վերագնահատման օրվա մասին՝ նրա ԱՈՒՊ-ը ճիշտ մշակելու համար:
  - տեղեկատվություն երեխային, ծառայությունների անհատական ծրագրով երաշխավորված միջոցառումների, աջակցող պարագաների, ինչպես նաև ստացած ծառայությունների մասին (Երեխայի բացահայտված կարիքը փոխանցել ծառայությունը մատուցող գերատեսչություն – ապահովել հետադարձ կապի հարցը):
- ✓ Անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգին անհրաժեշտ է.
  - ԿԱՊԿ անցած 3-18 տարեկան երեխաների կրթական հաստատության տվյալները, ԿԱՊԿ գնահատման սկիզբը, ավարտը, եզրակացությունը, գնահատում իրականացնող թիմի կազմը, ԱՈՒՊ-ը, ֆունկցիոնալության գնահատման բնութագիրը և դիտարկվող ժամանակաշրջանում տրամադրված ծառայությունները:
  - 18-25 տարեկանների կրթական հաստատության տվյալները, Ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ պայմանները՝ կարիքը և առկայությունը (Բրայլյան գրքեր, հարմարեցված միջավայր, հարմարեցված ուսուցման գործընթաց և այլն):

Քննարկումների արդյունքում որոշվեց.

- ✓ Մասնակիցներին տրամադրել Կիպրոսի փորձից ստացված գործիքների ցանկը:
- ✓ Մշակել յուրաքանչյուր ոլորտին անհրաժեշտ տվյալների մանրամասն ցանկը և ներկայացնել մասնակիցներին, որից հետո կազմակերպել լրացուցիչ քննարկում հստակեցնելու ներկայացված տվյալների փոխանակման հնարավորությունները, ժամկետները, պատասխանատուներին ու գործընթացների օպտիմալացումը:

ՀՀ ԱՍՀՆ և ՀՀ ԱՆ միջև միջև քննարկումների արդյունում արձանագրվեցին.

- ✓ e-health տեղեկատվական համակարգի մշակումը մեծ առաջընթաց է գրացնել, ներդրվում է ՀՄԴ-10, ՀՄԴ-10 PCS և LOINC կոդավորման համակարգեր: Մշակվել է առաջիկա 3 տարիների զարգացման ծրագիր, որի ընթացքում ամբողջ առողջապահական համակարգի տեղեկատվությունը հասանելի կլինի առ-ցանց: Յուրաքանչյուր քաղաքացի կունենա իր էջը և կարող է մուտք գործել նույնականացման քարտի միջոցով:
- ✓ e-health համակարգը պատրաստ է տեղեկատվություն փոխանակել, եթե հստակեցվի պահանջվող տեղեկատվությունը և քննարկվեն հնարավորություններն ու հասանելության ժամկետները համապատասխան մասնագետների հետ:

Տեղեկատվության փոխանակում.

- ✓ Անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգին անհրաժեշտ է.
    - 0-2 տարեկան երեխաների վերաբերյալ e-health համակարգում առկա ամբողջ տեղեկատվությունը:
    - Ուղեգիր հաշմանդամության գնահատման համար, որը ներառում է անձի հիվանդության պատմությունը, օբյեկտիվ զննման արդյունքները, նյարդաբանական վիճակը, հենաշարժական համակարգը, լաբորատոր և գործիքային հետազոտությունների արդյունքները, հիմնական հիվանդությունը (ըստ ՀՄԴ կոդերի, ֆունկցիայի խանգարման տեսակը և աստիճանը), ուղեկցող հիվանդությունները (ըստ ՀՄԴ կոդերի, ֆունկցիայի խանգարման տեսակը և աստիճանը):
    - Տեղեկատվություն ԾԱԾ-ով առողջապահական միջոցառումների մասով իրականացված ծառայությունների մասին:
- ✓ Առողջապահության համակարգին անհրաժետ է.
    - տեղեկատվություն անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանի, սահմանման ժամկետի, վերագնահատման օրվա մասին:
    - տեղեկատվություն անձի ժամանակավոր անաշխատունակության մասին:

Քննարկումների արդյունքում որոշվեց.

- ✓ Մշակել յուրաքանչյուր ոլորտին անհրաժեշտ տվյալների մանրամասն ցանկը և ներկայացնել մասնակիցներին, որից հետո կազմակերպել լրացուցիչ քննարկում հստակեցնելու ներկայացված տվյալների փոխանակման հնարավորությունները, ժամկետները, պատասխանատուներին ու գործընթացների օպտիմալացումը:
- ✓ Առողջապահության ազգային ինստիտուտը ՀՀ ԱՍՀՆ-ին կարող է հնարավորություն տալ դիտելու e-health համակարգի փորձնական մոդուլը:
- ✓ Կազմակերպել հանդիպում-քննարկումներ Առողջապահության ազգային ինստիտուտում ձևավորված ՀՄԴ-ՖՄԴ աշխատանքային խմբի հետ, հստակեցնելու հետագա ավելի արդյունավետ աշխատանքի հնարավորությունները և ժամկետները: